ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1953 Общественные науки

Ա. Ադամյան

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՇԱՄԻԼԻ ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմնավոր փաստերով ապացուցված է, որ Շամիլի և նրա նախորդների կողմից գլխավորած շարժումն ազգային-ազատագրական բնույթ չի ունեցել, իր էությամբ եղել է հակաժողովրդական, ռեակցիոն մի շարժում։ Այդ շարժումը հրահրել, կազմակերպել, նրան ռազմական և նյութական օգնություն են ցույց տվել թյուրքական և անգլիական կառավարող շրջանները՝ կովկասն իրենց ազդեցության տակ դնելու և այդ ժողովուրդներին անգլո-թյուրքական արյունոտ լծի տակ դնելու նպատակով։

Շամիլը և նրա նախորդները եղել են թյուրքական և անգլիական գործակալներ, որոնք գաղտնի հարաբերությունների մեջ են եղել թյուրքական կառավարության դեկավար շրջանների հետ և ռազմական պլաններ մշակել՝ ռուսական զորքերին Կովկասից դուրս հանելու համար։ Չնայած Անդրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո, երկար ժամանակ, Դաղստանի թյուրքոֆիլ ֆեոդալները, հանձինս Ղազի-Մոլլայի, Շամիլի և նրանց հետևորդների, կռվում էին Ռուսաստանի դեմ ազգային, կրոնական քողի տակ, իսկ իրականում այդ շարժման տակ թաքնված էին թյուրքական և անգլիական գաղութարարների ագրեսիվ քաղաքական նպատակները։

Հայերից ոմանք անձամբ մասնակցելով ռուսների դեմ Ղազի-Մոլլայի և Շամիլի մղած կռիվներին, պարզ է, որ չէին կարող այս կամ այն չափով չանդրադառնալ այդ իրադարձությանը և իրենց վերաբերմունքը ցույց տալ նրա նկատմամբ։ Հայտնի է, որ Ն. Գ. Չերնիշևսկու գաղափարական ղեկավարից և ռևոլյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանն իր «Հիշատակարանի» մեջ Շամիլի գլխավորած շարժումը բնութագրել է որպես ռեակցիոն մի շարժում և իր բացասական տիպերից երկուսին պատկերել է Շամիլի կերպարով (Հարություն Խալիպյանին և Գ. Վարդապետ Այվազովսկուն)[1]։

Հայ նշանավոր գրող Պերճ Պռոշյանը նույնպես բացասական կարծիք է ունեցել Շամիլի գլխավորած շարժման մասին։ Նա իր «Հուշիկներում» և «Շահեն» վեպում գրում է, որ Շամիլի ավազակային հարձակումներից պաշտպանվելու համար ոտքի է կանգնած եղել Թիֆլիսի ողջ բնակչությունը և կազմակերպել աշխարհազորային գնդեր Շամիլի հրոսակների դեմ կռվելու համար։

Շամիլի և նրա նախորդների կողմից գլխավորած մյուրիդական շարժումն ինչպիսի արձագանք է ունեցել հայ հասարակական տարբեր խավերի շրջաններում։ Այդ շարժման մասին Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվում կան հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով մի շարք վավերագրեր գրված՝ հայ, ռուս և վրացի զինվորականների, աշխատավորների և հոգևորականների կողմից, որոնք հնարավորություն են տալիս պարզաբանելու տարբեր հասարակական հոսանքների վերաբերմունքը դեպի այդ շարժումը։

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվում գտնված հիշյալ վավերագրերի հեղինակները մեծ մասամբ լինելով շահագործող դասակարգի ներկայացուցիչներ, Դաղստանի իրադարձությունները ներկայացնում են տենդենցիոզ ձևով։ Խոսելով այդ շարժման մասին, նրանք իրենց մեղադրանքներն ուղղել են Դաղստանի ողջ ժողովրդի դեմ՝ աշխատավոր ժողովրդին նույնացնելով ֆեոդալների, հոգևորականների և վաշխառուների հետ։

Այդ շարժման վերաբերյալ կարևոր տեղեկություններ է պարունակում 1832 թ. դեկտեմբերի 1-ին Թիֆլիսից Շերմազան Վարդանյանցի կողմից Էջմիածնին ուղղված նա-

---

[1] Մի։ Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Ա. հատոր, «Հիշատակարան», 1945, էջ 295—410։

մակը, որտեղ նկարագրված է Իմամ Ղազի-Մոլլայի հրոսակների և ռուսական զորքի միջև Դերբենդ և Գիմիրի գյուղերում տեղի ունեցած ճակատամարտը, որտեղ սպանվում է մյուրիդական շարժման աչքի ընկնող ղեկավար—Ղազի-Մոլլան։ «. . . Դարբանդ և Գիմիրի անուանեալ գիւղն,—գրում է նա,—ուր բնակեալ կայր Ղազի-Մոլլէն, վերառեալ շտուրմով և Ղազի-Մոլլային սպանեալ է պատերազմի միջին... վերոհիշեալ Ղազի-Մոլլան էր այսքան չաչանի և Դաղստանի խառնակութեանն պատճառն, և նա էր նոցա ղլխավորն»[1]։

Շամիլի հրոսակների դեմ գործող ռուսական բանակի յուրաքանչյուր կարևոր հաղթանակի մասին սովորաբար, իրադարձությունից անմիջապես հետո, տեղեկություն է հրատարակվել հրամանի ձևով, որը և կարդացվել է ինչպես զորամասերում, այնպես էլ եկեղեցիներում։ Այդ կարգի վավերագիր է 1839 թ. դեկտեմբերի 22-ին Էջմիածնի սինոդի կողմից եկեղեցիներին ուղարկած փաստաթուղթը, ուր գրում է.

«. . . Ղեներալ ադիւտանդ Կոարբեն յայտնէ նմա ի մասին իսկապէս ոչնչացուցանելոյ ի հիւսիսային Դաղստան ղխաժամուժ ամբոխն խռովարարին Շամիլի ի վերջին ապաստանի նոցին յԱխուլգո կոչեցեալ յայրի միում ամրացուցելոյ ձեռամբ բնութեանն և արուիստի. իսկ, որ զկնի բազմայամառ դիմադրաւութեան պատերազմի, վերջապես պարտեցաւ ի զինուորաց մերոց ի 22 անցեալ օգոստոսի, որով և խորտակեցաւ մինչև իսպառ չարախնդիր և թշնամական սկիզբն ատելութեան, որ ցարդ ոչ դադարէր յարուցանել ընդդէմ մեր դամենայն լեռնարնակ ազինս, լեռնարնակք կորուսին յայնմ մարտի ավելի քան զերկու հազար անձինս ընտրելագոյնս ի դանազան տոհմից, զերեալ են ցեօթն հարիւր գերդաստանք, և նոյն ինքն խռովարարն Շամիլ խոյս տալով արժանաւորագոյն վարձու վասն այսոցիկ չարագործութեանց իւրոց փախեալ միայն ընդ քանի մի համախոհից իւրոց, տարեալ ընդ ինքեան զանեծս ամբողջ գիւղօրէից, զորս հրոյ և սրոյ մատնեաց նա, վասն անձին իւրոյ»։

Աշխատավոր ժողովուրդը, ընդհանրապես, դայրույթով և ատելությամբ է լցված եղել դեպի Շամիլի հրոսակները։ Շամիլի ասպատակություններին ենթակա տեղացի՝ վրացի, ադրբեջանցի և հայ բնակիչները հաճախ զենք են վերցրել, միացել ռուսական բանակին և կռվել Շամիլի դեմ։ Շամիլի շարժման ավազակային բնույթը ցուցադրող կարևոր վավերագիր է 1850 թ. հոկտեմբերի 31-ին Ղարաբաղի կոնսիստորիայի կողմից Էջմիածին գրած մի հայտարարությունը, որի մեջ խոսվում է Շամիլի հրոսակների խաղաղ ժողովրդի վրա կատարած հարձակումներից մեկի մասին։ Հայտարարության մեջ նշված է, որ 1850 թ. հոկտեմբերի 11-ին, ցերեկը հանկարծակի Շաքվա գավառի վրա հարձակվում են Շամիլի հրոսախմբերից մեկը, հասնում են Իարաբաթմա կոչված փոստակայանը և կոտորում պահակներին։ Հրոսակախումբը առաջ շարժվելով հարձակվում է նաև ճալեթի վրա, որտեղից բազմաթիվ հայ և ադրբեջանցի գերիներ է տանում։ Նա ուզում է հարձակվել նաև Նուխի քաղաքի վրա, սակայն լսելով, որ Նուխու ազգարնակությունը և բերդի զորքը պատրաստվել են իրենց դիմադրել, հետաձգում է հարձակումը։ Ճալեթից վերադառնալուց հետո միայն դիշերը հարձակվում է Նուխու վրա։ Նուխեցիները և ռուս զինվորները դիմադրում են և փախուստի մատնում նրանց՝ ազատելով ճալեթից գերի տարած բնակիչների մի մասին։ «. . . ի 11 ներկայ հոկտեմբերի յաւուր չորեքշաբթի,—գրում են նրանք,—ի ցերեկի կեսաւուր յանկարծ յարձակեաւ խումբ անօրէն լեռնարնակ ազգաց ի Շաքի գաւառն և ընդ հասանել նոցա յիջևան փոստին, այսինքն ի Բարաբաթմայ կոչեցեալ չափարխանայն, իսկոյն այրեալ զնոյն և զի նմին գոտեալ պահապանն կոտորեալ, դիմեալ են ի դիւղն ճալեթ ի նմին իսկ աւուր, և ընդ արևմուտն հասեալ անդ գերեվարեալ են զրազում հայս և զտաճիկս ճալեթարնակ՝ և յաւար հարեալ են։ Սև ընդդարձ նոցա լուր եղեալ է, եթե մտանէ թշնամին ի քաղաքն Նուխի՝ առնել ըստ վերոգրելոյն, այլ վրիպեալ է նա ի յուսոյն իւրմէ զի կանխապատրաստ հոգատարությամբ ժողովք ժողովրդոց տեսեալ զայսպիսի մեծ վտանգ, յորմէ ի զարհուրանաց ի վերայ արշավելոց խռովեալք ամրացուցեալ են ի բերդի գկահս և զկարասիս իւրեանց և պնդեալ են ի նոյն։ բերդապահք զարթուցեալ են ի մարտ, իսկ իշխանաւորք քաղաքին պահպանօք և ամենայն հնարիւք զգուշութեան տքնեցին խափանել զնախամտադրեալ զորոգայթս թշնամւոյն։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. № 74, վավ. № 322։

[2] Հայկական ՍՍՌ Մատենադարան, արխիվային բաժին, սինոդի օրագրություններ, թղթ. № 6, վավ. № 337։

Ուստի և կրեալ են ամենայն գործք թղթոց հոգևոր կառավարութեան Շաքւոյ ի նոյն բերդն և խափանեալ են ամենայն ընթացք գործառնութեան Նորին և չև է խաղաղացեալ վրդովմունք թշնամեացն ցարդ։ Այն ինչ գրոհ վերադարձի ի ձալեթայ գերիվար թշնամեացն մուտ գործէր ի քաղաքն Նուխի ի դիշերայն հանդիպեալ անցապահ կարգեալ անձանց զդաստից, զդեմի հարեալ զոմանս ի գերեաց մերոց անտի թափեալ ի նոցանէ յետս դարձուցեալ են։ Եւ այսպէս տևեն վրդովմունք և անհանդիստ խռովութիւնք ցայսօր ի քաղաքին յաղագս երկիւղին այլևս յանկարծ դիմեցան նոցա ի գերիվարութիւն և յաւար հարկանումն»[1]։

Հայտնի է, որ տասնյակ տարիներ շարունակ Կախեթը, Թելավը, Զաքաթալան, Շաքին և այլ վայրերը ենթարկվել են Շամիլի և նրա նախորդների գլխավորած ասպատակություններին։ Շամիլը և նրա նախորդները ավերելով բարգավաճ քաղաքները և գյուղերը, բնակչության մի մասին կոտորում էին, իսկ մյուս մասին գերի տանում՝ անասելի տառապանքի ենթարկելով նրանց։ Գերիներից ազատում էին միայն նրանց, որոնց համար մեծ փրկագին էին տրվում ասպատակների պարագլուխներին։

Մեր տրամադրության տակ եղած վավերագրերից երևում է, որ 1854 թ. Շամիլի հրոսակները հարձակվել են Թելավ քաղաքի և նրա շրջակա գյուղերի վրա։ Թելավցիները դիմադրել են նրանց։ Դիմադրողների մեջ եղել են նաև հայեր, որոնցից մի քանիսն, այդ կռվում ցույց տված խիզախության համար արժանացել են կառավարության պարգևի։ Այդ մասին ուշագրավ է Իվան Կեսուլովի 1854 թ. սեպտեմբերի 8-ին Ներսես Աշտարակեցուն գրած մի նամակը, որը մենք բերում ենք ստորև փոքրիկ կրճատումով։

„Вашему Святейшеству, вероятно известно внезапно постигшее 3, 4 и 5 чисель, прошлого июля месяца, бедствие многих деревень Телавского уезда, нашествием на оныя в больших силах непокорных нам Горцов как равно и то, что вероломный неприятель от города Телава был в двух верстах... В означенное выше бедственное время, паствы Вашего Святейшества, Телавский Благочинный Протоиерей Хачатур Сукиасов и особо управляющий по распоряжению Святейшей особы Вашей в Телавском Уезде в селе Духовными делами Телавский гражданин Гигол Согроев, известный до селе своим безкористием и деятельностью к пользе как правительственной, так и общественной по неоднократным выборам в звании городского депутата и удостоившийся за это награждением золотою медалью—не касаясь сохранения по обязанности своей церковной утвари с имуществом, были твердым для Телавского Духовенства и граждан примером в самоотвержении угражавшей Городу Телаву от дерзского неприятеля опасности. О таком похвальном усердии Благочинного Сукиасова и гражданина Согроева при вторжении Горцев приятным долгом считаю довести до внимания Вашего святейшества"[2].

Ղրիմի կամպանիայի ժամանակ (1853—1856), ինչպես հայտնի է, Անգլիան, Թյուրքիան և Ֆրանսիան Շամիլի առաջ խնդիր էին դրել, որ նա իր ռազմական գործողությունները միացնի նրանց զորքերի գործողություններին, որպեսզի Կովկասում գտնվող ռուսական բանակին կտրեն թիկունքից և իրենց տիրապետությունը հաստատեն Անդրկովկասում։ Այս առթիվ արժեքավոր է Բերեզինսկա գյուղից Հարություն քահանա Վարդանյանցի 1855 թ. մայիսի 23-ին Ներսես Աշտարակեցուն գրած նամակը, ուր նա հայտնում է, որ ռուսական կառավարության կարգադրությամբ Կերչի բնակչությունը տեղավորվել է Նոր-Նախիջևանում և այլ վայրեր՝ չերքեզների[3], հատկապես անգլիացիների և նրա դաշնակիցների հարձակումներից ապահով լինելու համար։ «Ի 16 ամսոյս կառավարիչ զորաց կողմանս զեներալ Խամութին,—գրում է նա,—եկն ի քաղաքս մեր և 1՝ ամսոյս հրաման ետ ամենայն քաղաքացւոց հանել ի քաղաքէս զրնտանիս, զինչս, զդատաստանատունս, զդանձարանն, զհիւանդանոցս և զամենայն եկեղեցական անոթս՝ առ որ և ես գնացի ի տեղեկութիւն ի Նորին մեծութենէ, բայց զնոսա ներկա ոչ կարացի տեսանել,

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, արխիվային բաժին, Սինոդի կարգադրիչ մաս. թղթ. № 63, վավ. № 10։

[2] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթ. № 172, վավ. № 108։

[3] Այն ժամանակ չերքեզներ ասելով նկատի ունեին Շամիլի հրոսակներին։

այլ նակազնի ատաման զորաց Ձերնօմօրսկւոյ գեներալ մայոր Կուխարենկօն, առ որ էր Լեւանա, տեսա, Համութովն, յայտնեաս ինձ զտնօրէնութիւն Համութովայ՝ թէ, իրաւի, զոյ կասկած երկիւղի բաղաքիս յարձակմանէ չերքեզաց և մանաւանդ զօրաց անզգիաց-ուց և նոցա գաշնակցաց։ Առ այն զգուշութիւն հրամայեալ էր Նորին Մեծութիւն յիշեալ Համութովս ա Դ՝ՐՇ [illegible] զուշացօղք եին անվանս և անփոյթ առնողք կրեցին զվնաս կսկծանօր հանդերձ։ Այսպէս և մեզ հրամայալ է ունել զնախահոգութիւն, յորմէ հրամանէ վրդովեալ առհասարակ բաղաքացւոց նախ ռուսաց եկեղեցականօք հանդերձ և եկեղեցական զոյիւք և մերս ժողովրդականաց, չուեցին իւրաքանչիւր որ ըստ իւրումն կամաց։ Մերս ժողովրդականք, բաղումք ի բաղաքն իւրեանց նախիջեւան, ոմանք այլ և այլ գիւղորայս և անուորք տասն աստի ի գիւղս Բերեզանսկի, որ ա-վելի ապահով համարեալ էր կառավարութեան Ձերնօմօրու։ Եւ իրիցփոխանին եկեղեցւոյս մերոյ բարւոք համարեալ զեկեղեցական անոթս և զամենայն զգոյս պահպանել աստ, առ որ [illegible] եկեղեցական անոթս և կամք ի մի տեղի մերովք ընտանեօք և տնային զոիւք։ Եւ եթէ պատահեսցի աստի ևս չու ուրեք, պարտաւոր եմք յայն ժամ զոգիս միայն զերծուցանել և այն եթէ կարիցեմք՝ և զեղելութիւնս մեր թողուլ ընկեցեալ պատճառաւ ոչ զտանելոյն յայսնուադ սայլի և ամենայն ոք հետևման իւրն ընտանեաց և զոյից զերծուցման, և զտեալ ևս յոյժ ծանրագին, որ չէ կարելի այժմ տեղավ գրել»[1]։

Թյուրքական կառավարությունը Անդրկովկասի ժողովուրդներին իր լծի տակ զցելու նպատակով Անդրկովկաս էր ուղարկում իր գործակալներին։ Թյուրքիան օգտագործում էր նաև Անդրկովկասում հակառուսական օրիենտացիա ունեցող քրեական հանցագործ տարրերին, որոնց միջոցով Թյուրքիային սահմանակից Անդրկովկասի վրայով, մաքսանենգ ճանապարհով զենք և զինամթերք էր ուղարկում Շամիլին։

Անդրկովկասում գործող Թյուրքիայի գործակալներից մեկին մերկացնելու տեսակետից ուշագրավ է գեներալ Բեհրութովի 1855 թ. դեկտեմբերի 9-ին Աշտարակեցուն ուղարկած նամակը, ուր գրում է, որ Թյուրքահպատակ ոմն Հաջի Իսմայիլի միջոցով Շամիլը մի նամակ է ուղարկել Թյուրքիա. ռուսական հետախուզությունն իմանալով այդ մասին, հետապնդել և Բորչալուի գավառում նման նշաններով մի մարդ է բռնել, որն իրեն անվանել է Արդի-Արդուլա-օղլի։ Նրան բանտարկելուց հետո քննությունների ընթացքում, նա չի ուզեցել հանձն առնել, որ ինքը Հաջի Իսմայիլն է։ Սակայն նրա արտաքին նշաններից, խոսակցության առոգանությունից և նրա հետ բանտարկյալի անվան տակ բանտում նստած մի մարդու տված տեղեկություններից ապացուցվել է, որ նա Շամիլի կողմից Թյուրքիա ուղարկված գործակալն է։ Նրան Արդի-Արդուլա-օղլի անվան տակ ռուսական կառավարությունը որպես ռազմագերի ուղարկել է Նովոչերկասկ, որպեսզի փոխանակվի Շամիլի մոտ, ընտանիքի հետ միասին գերության մեջ տառապող Տուրիս-Ցիխեցի Սիմիոն քահանա Մարտիրոսյանի հետ։ Հիշյալ քահանային և նրա ընտանիքին 1854 թ. Թելավի վրա հարձակվելու ժամանակ գերի էր տարել Շամիլը։ Այդ մասին ահա ինչ է գրում Բեհրութովը.

„По рапорту в Армяно-Григорианскую Духовную Консисторию находящегося в плену у горцев, бывшего священника Телавского уезда сел. Турис-Цихе Тер-Семена Тер-Мартирузова, переправожденному Вашим Святейшеством ко мне при письме от 30 прошлого июля № 155, были собраны все возможные сведения.

Лицо, которое бы вполне удовлетворяло указаниям горцев относительно того Ахалцихского жителя, на которого они согласны обменять священника Мартирузова, по сведениям собранным в штабе не оказалось. Но весною нынешнего года получено было известие, что Шамиль отправил письмо в Турцию с Турецко-поданным Хаджи Измаилом и описаны были приметы этого человека. По принятым земского полициею мерам схвачен был с такими приметами в Борчалинском участке некто называвший себя Абди-Абдуллою Огли. При допросах он не сознался в переносе писем от Шамиля в Турцию, равно не признавался, что его зовут Хаджи Измаилом, но из обстоятельств его поимки, из разноречивости

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան. թղթ. № 176. մատ. № 79 աթ.

показаний его и из сведений, полученных об нем от посаженного вместе с ним в тюрьму человека под видом арестанта, можно было сделать заключение, что он есть тот самый Хаджи Измаил, который был разыскиваем. В мае месяце этот человек под именем Абди-Абдулл-Огли был отправлен из Тифлиса в Новочеркасск, как военно-пленный.

По докладу об этом Г. Главнокомандующему, Его Высокопревосходительство изволил изъявить согласие на вымен Абди-Абдулы-Оглы на священника Мартирузова.

По поручению Его Высокопревосходительства, я вместе с ним обращаюсь К. Г. Военному Министру с просьбою об исходатайствовании Высочайшего Государя императора соизволения на отправление сего Азиатца в Тифлис для вымена на него из плена Г. Мартирузова: Относительно же освобождения из плена семейства его предписана Г. Заведывающему.

Левый флангом Кавказской линии, чтобы иметь оное ввиду по присылке из России пленных горцов, которых Шамиль просит на вымен Кахетинцев, взятых в плен в июле 1854 года"[1]

Պարելի է բերել մի շարք այլ փաստեր ևս, սակայն բերածները կարծում ենք բավական են համոզվելու համար, որ հիշյալ շարժումը իրոք հակաժողովրդական շարժում է եղել և որ այդ շարժումը Շամիլի դլխավորությամբ նպատակ է ունեցել Թյուրքիայի և Անգլիայի թելադրանքով խռովություններ բարձրացնել Ռուսաստանի դեմ՝ Կովկասի ժողովուրդներին Թյուրքիայի և Անգլիայի արյունոտ լծի տակ դնելու համար[2]։

---

[1] *Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, արխիվային բաժին, կաթ. դիվան, թղթապանակ № 178, վավերագիր № 368։*

[2] *Մատենադարանի արխիվում բացի այստեղ օգտագործված վեց վավերագրերից նշված շարժման մասին, կան նաև հետևյալ վավերագրերը.*

ա) Ալ. Երիցյանի արխիվ, թղթապանակ	*№ 148,*	*վավերագիր*	*№ 51*
» » » »	*№ 152*	»	*№ 189, 168[5], 158*
» » » »	*№ 153*	»	*№ 18[4]*
» » » »	*№ 155*	»	*№ 83*
» » » »	*№ 159*	»	*№ 35 ա*
բ) Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ.	*№ 164,*	*վավերագիր*	*№ 1291*
» » » »	*№ 165*	»	*№ 124, 181*
գ) Սինոդի օրագրություններ թղթ.	*№ 6,*	*վավերագիր*	*№ 150, 415, 678*
գ) Սինոդի կարդացիչ մաս, թղթ.	*№ 16,*	*վավերագիր*	*№ 147*
ե) Կաթողիկոսի դիվան, թղթապանակ	*№ 36,*	*վավերագիր*	*№ 19*
» » »	*№ 73*	»	*№ 163*
» » »	*№ 78*	»	*№ 4*
» » »	*№ 104*	»	*№ 41*
» » »	*№ 111*	»	*№ 537*
» » »	*№ 116ա*	»	*№ 209, 210, 235*
» » »	*№ 121*	»	*№ 41, 209*
» » »	*№ 129*	»	*№ 131, 171, 299*
» » »	*№ 137*	»	*№ 243, 241*
» » »	*№ 146*	»	*№ 392*
» » »	*№ 147*	»	*№ 478*
» » »	*№ 149*	»	*№ 784*
» » »	*№ 181*	»	*№ 168, 213*